

Տեղեկանք - հիմնավորում

Ամբողջ աշխարհում բժշկական կրթությունը իրենից ներկայացնում է յուրատեսակ կրթական համակարգ և կազմված է իրար հաջորդող որոշակի փուլերից: Այն բաղկացած է դիպլոմային, հետդիպլոմային, մասնագիտական և շարունակական կրթական բաղադրիչներից: Շատ երկրներում կիրառվում է նաև նախադիպլոմային ուսուցում, որը իրականացվում է բժշկական կողմնորոշման առարկաներ դասավանդելու միջոցով՝ ավագ դպրոցներում և համապատասխան բոլեջներում: Այս կրթական փուլերը՝ նախադիպլոմային, դիպլոմային, հետդիպլոմային և շարունակական, իրականացնելու համար բժշկական պրոֆիլի յուրաքանչյուր ԲՈՒՀ պետք է ունենա անհրաժեշտ կառուցվածքային ստորաբաժանումներ: Բժշկական կրթության առանձնահատկությունը կայանում է նրանում, որ կլինիկական բազաներում ուսանողը պետք է իր համապատասխան կրթությունը ստանա բժիշկ, դասախոս և պացիենտ եռակողմ մասնակցությամբ:

Դիպլոմային կրթության մակարդակում ներկայումս իրականացվում են լուրջ բարեփոխումներ:

Դեռևս վեց տարի տարի առաջ Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է փաստաթուղթ, որը հաստատում է անդամակցումը Բոլոնյան գործընթացին և որի համաձայն հինգ տարի առաջ Համալսարանում մեկնարկել է բակալավրիատի գործընթացը: 2010 թվականին Համալսարանը ավարտել են «ստոմատոլոգիա» և «դեղագիտություն» մասնագիտություններով բակալավրներ, որոնք իրենց ուսումը շարունակում են երկաստիճան բարձրագույն կրթության երկրորդ փուլում՝ մագիստրատուրայում: Իսկ 2011 թվականին Համալսարանը ավարտեցին բժշկագիտության բակալավրներ, որոնք սեպտեմբերից կրթությունը կշարունակեն մագիստրատուրայում: Այսպիսով, բժշկական դիպլոմային կրթությունը բաղկացած է բարձրագույն բազային կրթությունից, որը ունի երկու աստիճան՝ բակալավրիատ և մագիստրատուրա: Բակալավրիատը ավարտելուց հետո տրվում է բժշկագիտության բակալավրի դիպլոմ՝ ուսման տևողությունը հինգ տարի, մագիստրատուրան ավարտելուց հետո տրվում է բժշկի որակավորում՝ ուսման տևողությունը երկու տարի: Բարձրագույն բժշկական կրթության դիպլոմ ստանալուց հետո Համալսարանի բոլոր ֆակուլտետների յուրանքանչյուր շրջանավարտ հնարավորություն ունի հետդիպլոմային նեղ մասնագիտացում ստանալ՝ սովորելով կլինիկական օրդինատուրայում (ռեզիդենտուրայում):

Բոլոր ուսումնական գործընթացները իրականացվում են համապատասխան մասնագիտական ամբիոնների միջոցով: Մինչև այժմ Համալսարանում բժշկագիտության բակալավրի, մագիստրոսի և կլինիկական օրդինատորի կրթության իրականացման համար ստեղծված չեն եղել համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներ, որի պատճառով մենք այդ մակարդակներում որակյալ մասնագետներ պատրաստելու հնարավորություն չենք ունեցել: Ներկայումս մենք արդեն ավարտում ենք դիպլոմային կրթության համապատասխան ստորաբաժանումների ձևավորման գործընթացը: Ստեղծվել են նոր կլինիկական ամբիոններ, որոնք պետք է դասավանդեն բացառապես բակալավրիատի մակարդակում և բոլորովին այլ ամբիոններ, որոնք պետք է ուսուցումը իրականացնեն մագիստրատուրայում: Եթե դիպլոմային կրթության մակարդակում Համալսարանը հնարավորություն ունեցավ այս կառույցները ստեղծել իր ուժերով, ապա խնդիրը մի փոքր ավելի բարդ է հետդիպլոմային և շարունակական կրթության մակարդակում: Բարդությունը կայանում է նրանում, որ մենք Համալսարանում պետք է ստեղծենք բոլորովին նոր կառուցվածքային ստորաբաժանումներ: Արդեն իսկ ստեղծվել է հետդիպլոմային և շարունակական կրթության ֆակուլտետը և հաջորդ փուլում պետք է կազմավորել նշված կրթությունն իրականացնող նվազագույնը 25 կլինիկական ամբիոններ: Հասկանալի է, որ նշված քանակով կառույցներ ստեղծելու համար անհրաժեշտ են ֆինանսական լրացուցիչ միջոցներ, բայց շատ ավելի կարևոր է, որ բացակայում են համապատասխան կադրերն ու կլինիկական բազաները:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ս.Խ.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությունն, իր հիմնական գործառույթներից զատ, այն է՝ առողջապահության համակարգի համար նորմատիվային փաստաթղթերի մշակում, օրենսդրական և ենթաօրենսդրական փաստաթղթերի մշակում կամ փորձաքննություն, համակարգի տեղեկատվական, վերլուծական աշխատանքների իրականացում, ինչպես նաև գիտահետազոտական աշխատանքների կազմակերպում, իրականացնում է նաև հետդիպլոմային կրթություն՝ համապատասխան ամբիոնների միջոցով, համապատասխան կլինիկական բազաներում: Առանձնահատուկ պետք է նշել, որ Համալսարանը և Առողջապահության ազգային ինստիտուտը ունեն նույնանուն ամբիոններ, որոնք շատ դեպքերում թերծանրաբեռնված են և օգտվում են նույն կլինիկական բազաներից:

Հայտնի է, որ հանրապետությունում գործում են շատ կլինիկաներ, որոնք ունեն մոնոպրոֆիլ ուղղվածություն (դատաբժշկական փորձաքննության կենտրոն, արյունաբանության, օնկոլոգիայի, ֆիզիոթերապիայի և կուրորտաբանության ինստիտուտներ, մաշկավեներոլոգիական դիսպանսեր, հակատուբերկուլոզային, ինֆեկցիոն հիվանդանոցներ և այլն), և տվյալ կլինիկաներում աշխատող սակավաթիվ պրոֆեսորադասախոսական կազմը մեծամասամբ աշխատում է երկու հաստատությունների համար, սակայն տարբեր ծրագրերով:

Ելնելով վերը նշվածից՝ նպատակահարմար է ՀՀ ԱՆ «Ս.Խ.Ավդաբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի հետքուհական և շարունակական կրթության բաղադրիչը տեղափոխել Համալսարան՝ իր ամբողջ կառուցվածքով (ամբիոններ, պրոֆեսորադասախոսական կազմ, կլինիկական օրդինատորներ և այլն), արդյունքում շուրջ 30-35 տեսական եւ թերծանրաբեռնված ամբիոններ կմիավորվեն (հիգիենա, էպիդեմիոլոգիա, միկրոբիոլոգիա, առողջապահության կազմակերպում, պաթոֆիզիոլոգիա, փիլիսոփայություն, հեմատոլոգիա, օնկոլոգիա, ռազմական բժշկություն, կլինիկական ֆարմակոլոգիա, դատական բժշկություն, նեղ ստոմատոլոգիական ամբիոններ և այլն): Արդյունքում, Համալսարանը կունենա միջազգային չափանիշներին համապատասխան լուրջ կառուցվածք, ինչը հնարավորություն կտա արագացնել միջազգային ակրեդիտացիան, այլ կերպ ասած, ներքին ինտեգրացիան կրերի նաև արտաքին ինտեգրացիայի: Տվյալ դեպքում մենք չենք փոշիացնի եղած պետական ֆինանսական միջոցները, պրոֆեսորադասախոսական ներուժը, կլինիկական բազաների հնարավորությունը կօգտագործվի առավել արդյունավետ: Այս ամենի արդյունքում Համալսարանը հնարավորություն կունենա պատրաստել միջազգային չափորոշիչներին համապատասխան բժիշկ մասնագետներ, այն՝ ինչը, մեր կարծիքով, ՀՀ առողջապահության նախարարության գլխավոր պահանջն է: Նշված վերակազմավորումը կնպաստի բժշկական բարձրագույն և մասնագիտական կրթության արտահանմանը: